

ՀԱՏԿԱՅՈՒՅՉԻ ԵՎ ՀԱՏԿԱՅՅԱԼԻ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐԱԵՎՈՐՈՒՄ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Շարահյուսական կապակցության եղանակները մեր լեզվի երկու ճյուղերում՝ արևելահայերենում և արևմտահայերենում, նույնն են՝ **համաձայնություն, կառավարում (խնդրառություն), առդրություն**, սակայն սրանցից յուրաքանչյուրը դրսևորման որոշակի տարբերություններ ունի:

Համաձայնությունը լեզվական միավորների շարահյուսական կապակցության այն եղանակն է, որի դեպքում միավորները կապակցվելու համար ընդունում են միևնույն՝ երկուսի համար ընդհանուր քերականական կարգերը, ընդ որում, հնարավոր է, որ կապակցվող միավորները երկուսին էլ բնորոշ բոլոր քերականական կարգերով չհամաձայնեն, օրինակ՝ *մի աշակերտը Արամը* կապակցության մեջ բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնել են թվով և հոլովով, իսկ առկայացման կարգով չեն համաձայնել. բացահայտյալն անորոշ է, բացահայտիչը՝ որոշյալ: Համաձայնությունը սահմանելիս մենք սովորաբար ընդունված «կապակցվող բառեր» բնորոշման փոխարեն գործածեցինք «լեզվական միավորներ» ձևը, որովհետև համաձայնությունը նաև բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոց է. *հմմտ.* բարդ նախադասության բաղադրիչների եղանակաժամանակային կամ հարաբերյալների թվային համաձայնությունը և այլն:

Ժամանակակից արևելահայերենում համաձայնությամբ են կապակցվում ենթական ու ստորոգյալը, ինչպես նաև բացահայտիչն ու բացահայտյալը: Կան նաև համաձայնության մասնակի այլ դրսևորումներ (օրինակ՝ որոշիչ-որոշյալ կապակցություններում երբեմն կարող է լինել թվային համաձայնություն, ինչպես՝ *տարբեր ապրանքներ, բազմաթիվ գրքեր* և այլն): Ենթակայի ու ստորոգյալի, բացահայտիչի ու բացահայտյալի համաձայնությունից բացի՝ արևմտահայերենում առկա է նաև հատկացուցիչ-հատկացյալի համաձայնությունը: Արևելահայերենում հատկացուցչի ու հատկացյալի համաձայնության միայն մասնակի դրսևորումներ կան. որոշ դեպքերում, իմաստով պայմանավորված, հատկացուցիչն ու հատկացյալը թվով համաձայնում են¹, ինչպես՝ «*Ծառերի ճյուղերը* (բայց ոչ ճյուղը) հասնում էին պատուհանին» և այլն: Արևմտահայերենում նույնպես առկա է համաձայնության վերոհիշյալ եղանակը, օրինակ՝ «*Կենդանիներուն պարանոցներեն* կախ *զանգակներուն* բազմաձայն *հնչյուններով* ու երգերով, մենք հաղթականորեն կիջնայինք գյուղ, կալերը» (Հ. Մնձուրի): Սակայն հատկացուցիչն ու հատկացյալը համաձայնում են նաև **դեմքի և առկայացման** քերականական կարգերով: Անդրադառնանք սրանց առանձին-առանձին:

Հատկացուցչի և հատկացյալի դիմային համաձայնությունը: Արևմտահայերենում հատկացուցիչը և հատկացյալը դեմքի քերականական կարգով համաձայնում են այն դեպքում, երբ հատկացուցիչն արտահայտվում է եզակի թվի անձնական դերանունով: Եթե հատկացուցիչը առաջին դեմքի անձնական դերանուն է,

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 266:

ապա հատկացյալը ստանում է Ս, եթե երկրորդ դեմքի դերանունն է՝ Դ, եթե երրորդ դեմքի դերանունն է՝ Ը/Ն հոդը, ինչպես.

դեմքը	եզակի թիվ	օրինակներ
1-ին դեմք	իմ գիրքս	Իմ սիրտս սկսավ արագորեն զարկել (Հ. Մեծուրի):
2-րդ դեմք	քու գիրքդ	Ի՞նչ ըրիր քու եղբորդ (Ե. Օտյան):
3-րդ դեմք	անոր գիրքը	Իմ ուշադրությունս առավելապես կգրավեին անոր հասակն ու մազերը (Հ. Մեծուրի):
	իր գիրքը	Հիշեցրի իր նշանավոր բանասխոսությունը (Ա. Ծառուկյան):

Անձնական դերանունների հոգնակի թվով արտահայտված հատկացուցիչների դեպքում այս համաձայնությունը չի գործում. բոլոր դեմքերով հատկացուցիչների հետ հատկացյալը կարող է ստանալ միայն Ը/Ն հոդը (որը, ինչպես կտեսնենք, կարող է արտահայտել որոշյալություն կամ ստացականություն), ինչպես.

դեմքը	հոգնակի թիվ	օրինակներ
1-ին դեմք	մեր գիրքը	Մեր գործը պրծավ (Ե. Օտյան):
2-րդ դեմք	ձեր գիրքը	Գացեք հիմա ձեր փունները (Ա. Ծառուկյան):
3-րդ դեմք	անոնց գիրքը	Անոնց մայրերը , հնձող ըլլալուն, միասին բերած էին զանոնք (Հ. Մեծուրի):
	իրենց գիրքը	Ընդհակառակը, իրենց այդ անհասկացողությունը ավելի եռանդ կուտա ինձի (Ե. Օտյան):

Թվում է, թե եզակի երրորդ դեմքով հատկացուցիչի հետ գործածվող հատկացյալի Ը/Ն հոդը (**իր գիրքը**) ոչ թե դիմային համաձայնություն, այլ որոշյալություն է արտահայտում, բայց այս դեպքում ևս գործ ունենք դիմային համաձայնության հետ, և ահա թե ինչու: Հայտնի է, որ գործիական հոլովը արևմտահայերենում (արևելահայերենում ևս) որոշիչ հոդ չի ստանում: Ինչպես նշում է Արսեն Այտընյանը. «Ամեն հոլովմանց մեջ գործիական հոլովն երբեք յոդ չ'առնուր: Չ'ըսուիր՝ Փայտովը զարմեւ. այն ծաղիկներովը զարդարեւ»²: Բայց այլ է ստացական հոդը, որը կարող է դրվել բոլոր հոլովների վրա: Արևելահայերենում այս գործառույթով հանդես են գալիս միայն Ս, Դ հոդերը, ինչպես՝ **գիրքս/դ, գրքիս/դ, գրքովս/դ, գրքումս/դ**: Արևմտահայերենում դիմորոշ-ստացական գործառույթով, որպես երրորդ դեմքի արտահայտիչ, գործածվում է նաև Ը/Ն հոդը, որը նույնպես կարող է դրվել բոլոր հոլովների հետ: Այտընյանը ստացական (իր տերմինով՝ դերանունական) հոդի մասին գրում է. «Բայց զատ է դերանունական յոդն որ միշտ եւ ամեն կերպ հոլովի վրայ կը դրուի. ինչպես այս օրինակներուս մեջ՝ Բարբաբոսաց արշաւանքը. թշնամոյն զօրացը մեջ. (իւր) տղոցը. (մեր) ծառաներովը. (դահիճին) սրովը. (Գթաց) տէրութեանը, եւ այլն»³: Այսպիսով՝ արևմտահայերենում Ս, Դ, Ն/Ը հոդերը ստացական - դիմորոշ գործառույթով կարող են հանդես գալ բոլոր հոլովների հետ, և բոլոր հոլովներով հատկացյալները դեմքով համաձայնում են եզակի թվի անձնական դերանուններով արտահայտված հատկացուցիչներին, ինչպես.

հոլովը	1-ին դեմք
ու.-հ.	Ինկած էր նաև իմ բաժինս (Ա. Ծառուկյան):

² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 23:

³ Նույն տեղում:

u.-տ. Վճռականորեն կպահանջեր **իմ հացիս** կեսը (Ա. Ծառուկյան):
բաց. Չէր նեղվեր **իմ ներկայութենես** (Հ. Մեծուրի):
գործ. Ներսեսն մաքուր հազված տղա մը ելավ՝ **իմ հասակովս**
(Ա. Ծառուկյան):

հոլովը

2-րդ դեմք

ու.-հ. Քոնկի բաղարջեն է **քու հիվանդությունը** (Հ. Մեծուրի):
u.-տ. Պիտի ուզեի ինքզինքս ցոլացած տեսնել **քու գրիչիդ** գծագրած
հայելիի մեջ (Օ. Չիֆթե-Մարաֆ):
բաց. Ես **քու երեսնդ** կհասկնամ, որ գոհ չես (Շ. Շահնուր):
գործ. **Քու սիրովդ** հալեցա, Աղավնի (Շ. Շահնուր):

հոլովը

3-րդ դեմք

ու.-հ. Ու բոլորին կհաղորդեր **իր մկաղորությունը** (Հ. Մեծուրի): Կրնայի
մեկ ձեռքով իսկ բարձրացնել **անոր** ճղճիմ **մարմինը**
(Ա. Ծառուկյան):
u.-տ. Ան միշտ կայցելեր **իր մշակներուն** (Հ. Մեծուրի): Ես կվերագրեի
անոր անհամարչակությունը (Հ. Մեծուրի):
բաց. Հանձնարարեց, որ գերեզման երթա՝ **իր լուսահոգի ծնողքեն**
խնդրելու (Շ. Շահնուր): Ամենն ավելի **անոր բնավորութենեն,**
քայլելեն, շարժուչկեն կախորժեր (Հ. Մեծուրի):
գործ. **Իր** նույն թրբախառն **հայերենովը** ըսավ (Շ. Շահնուր):
Կերթայինք, **անոր ջուրովը** կվլանայինք (Հ. Մեծուրի):

Բայց պետք է նշել, որ երրորդ դեմքով հատկացուցիչների դեպքում նկատվում են նաև անհամաձայնություններ, այսինքն՝ հատկացյալը հող չի ստանում: Սա գլխավորապես լինում է գործիական հոլովով հատկացյալների դեպքում, ինչպես՝ «**Իր դրամով** ճամբան շաքար գնեց ու կերավ» (Ա. Ծառուկյան), «**Իր** ամբողջ **մարմնով** ցնցվեցավ Աղավնի» (Շ. Շահնուր):

Հնարավոր է, որ իրար հետ միանգամից գործածվեն երկու տարբեր դեմքերով հատկացուցիչներ: Հ. Մեծուրու ստեղծագործություններից մեկում հանդիպում ենք այնպիսի կիրառության, որում առաջին և երկրորդ դեմքերի հատկացուցիչների հետ գործածված հատկացյալը համաձայնել է երկրորդ դեմքով հատկացուցչին (գործել է ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության հակառակ երևույթը), ինչպես՝ «Մի՞թե **իմ** ու **քու ուզելովդ** պիտի ըլլա»: Հակված ենք սա համարելու դիպվածային կիրառություն կամ վրիպակ, քանի որ այստեղ հատկացյալը ստանում է Ը/Ն հողը, որը որոշյալության արտահայտիչ է: Բերենք օրինակ հենց նույն հեղինակի ստեղծագործությունից՝ «Աչքը շարունակ **իմ** ու **քու քսակն** ու **փուփն** է» (Հ. Մեծուրի): Այս վերջին ձևը բնորոշ է նաև արևելահայերենին. «**Իմ** ու **քո գրքերը** նույնն են»:

Հաճախ եզակի թվի անձնական դերանուններով հատկացուցիչները կարող են հանդես չգալ, բայց նրանց իմաստը պարզ է դառնում հողերից: Արևելահայերենում դա կատարվում է միայն Ս, Դ հողերի միջոցով. **իմնտ. իմ գիրքը - գիրքս, քո գիրքը - գիրքդ: Նրա գիրքը - գիրքը** ձևերում Ը հողն արդեն որոշյալության, այլ ոչ թե դիմորոշության ու ստացականության արտահայտիչ է: Դա ապացուցում ենք նրանով, որ Ս, Դ հողերն ունեցող հատկացյալները արևելահայերենում չեն կարող դրվել **իմ, քո** դերանունների հետ (սխալ են **իմ գիրքս, քո գիրքդ** կապակցությունները), իսկ Ը հողով հատկացյալը կարող է ընդունել երրորդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված հատկացուցիչներ (**նրա/իր գիրքը**), քանի

որ Ը-ն միայն որոշյալությամբ է արտահայտում և չի հակադրվում դեմքն արտահայտող դերանվանը: Արևմտահայերենում որպես երրորդ դեմքի արտահայտիչ գործածվում է նաև Ը/Ն հոդը.

- 1-ին դեմք **Իմանալովս** Գոհարը քեզի չեն տար եղեր (Հ. Մնձուրի):
- 2-րդ դեմք Դուն վառե **ճիկասադ**, ես կվառեմ ետքեն (Հ. Մնձուրի):
- 3-րդ դեմք **Չեռքովը** հաստ հողպատին մյուս կողմը ցույց տվավ (Հ. Մնձուրի):

Բայց պետք է նշել, որ այն հոլովների դեպքում, որոնք կարող են որոշիչ հոդ ստանալ, Ը/Ն հոդը ցույց է տալիս ոչ թե չարտահայտված հատկացուցիչ դեմքը, այլ հատկացյալի որոշյալությունը: Արևելահայերենում որոշիչ հոդ են ստանում ուղղական-հայցական և սեռական-տրական հոլովները, արևմտահայերենում՝ նաև բացառականը: Ուստի արևելահայերենի **գիրքը, գրքին**, և արևմտահայերենի **գիրքը, գիրքին, գիրքեն** ձևերը նշանակում են ոչ թե **իմ գիրքը // գրքին** և այլն, այլ պարզապես որոշյալ են:

Հայտնի է, որ **կապ-կապի խնդիր** կապակցությունը ծագումնաբանորեն նույնանում է **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությանը, և պատմական այս գործոնը դեր է խաղում նաև ներկայումս: Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, «Ժամանակակից հայերենը հակում ունի հմից եկող կապերի համար պահպանել նրանց ավանդական խնդրառությունը, իսկ նոր կապերը գործածել գերազանցապես տրականի (սրա սեռական տարբերակի) հետ՝ որպես հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն»⁴: Այս հանգամանքը պատճառ է դառնում, որ արևմտահայերենում **հատկացուցիչ-հատկացյալ** դիմային համաձայնությունը իր արտահայտությունն ունենա նաև **կապ-կապի խնդիր** որոշ կապակցություններում, որոնցում կապերի վրա դրվելով՝ Ս, Դ, Ն/Ը հոդերը կառարում են նույն գործառույթը, ինչպես՝ «Խոզաններուն կանաչ խոտերը կերցնելու համար հովիվները իրենց հոտերովը կբափառեին **իմ շուրջս**» (Հ. Մնձուրի). «Ատոնց վերհիշումները բուռն կարոտներ կարթնացնեին **իմ ներսս**» (Հ. Մնձուրի). «Շատ բնականորեն **իմ մեջս** կ'ապրեին հիշատակները» (Հ. Մնձուրի). «Նշանը զիս տեսնելուն պես՝ եկավ **իմ մոպս**» (Հ. Մնձուրի). «Մեր զգացած էր իր սրտին մեջ **իմ մասիս**» (Հ. Մնձուրի). «Հայրիկին բարձր հովանավորությունը, անցնելով էշեն, կտարածվեր նաև **իմ վրաս**» (Ա. Ծառուկյան). «Անոնք խոսեցան **քու վրայովը**» (Ս. Սեզա). «Բես Մերգո կհավմի **իր քովը** առնելու Վարդանը» (Ե. Օտյան). «...բիժը **իր կողմը** ըլլար» (Ա. Ծառուկյան):

Այս դեպքում ևս առանց հատկացուցիչների (այսինքն՝ կապի խնդիրների) կապերը կարող են հոդ ստանալով արտահայտել նրանց իմաստը. «Վախ մը կար **մեջս**» (Ա. Ծառուկյան). «**Քովս** կեցած է հիմա» (Ա. Ծառուկյան). «Հանկարծ՝ զինյալ **վրաս** հարձակեցան» (Ե. Օտյան): Արևելահայերենում նույնպես կապերը հոդերի հետ կարող են արտահայտել կապի խնդրի իմաստը, ընդ որում, այս դեպքում որպես երրորդ դեմքի արտահայտիչ հանդես է գալիս Ը/Ն հոդը, որը **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցության դեպքում արևելահայերենում այս գործառույթը չի կատարում, ինչպես՝ **իմ մեջ - մեջս, քո մեջ - մեջդ, նրա // ճամպարուկի մեջ - մեջը (հմմտ. Բերեցին ճամպարուկը. նրա մեջ** դրեցին իրերը // **մեջը** դրեցին իրերը): Այս դեպքում կա նաև փոխանվանական կիրառության գործոնը, եթե հատկացուցիչն արտահայտված է գոյականով: Պետք է նշել, որ երկու գրականներում էլ հոդ կարող է ստանալ կապերի միայն մի մասը՝ հիմնականում հոլովվող կապերը, իսկ մյուս կապերը՝ **համար, պես** և այլն, հոդ չեն ստանում: Կապերը հոդ չեն ստանում նաև այն դեպքում, երբ դրվում են

⁴ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 439:

մյուս հոլովներով բառերի հետ, քանի որ այդ դեպքում **կապ-կապի խնդիր** կառույցը չի նմանվում **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությանը. «Լեցված էի ես **ինձի դև**» (Ա. Շառուկյան). «Վաղը **ինչ մուր** կուգա Տեր Սահակ» (Ե. Օտյան):

Ավելացնենք նաև, որ կապերի՝ արևմտահայերենում առկա համաձայնությունը գոյականով արտահայտված խնդիրների դեպքում բնականաբար չի գործում, քանի որ այդ դեպքում դիմային հակադրություն չի դրսևորվում. «Արտոնված էինք խաղալու դուրսը, մեր **բակին մեջ** (փոխ.՝ *մեջը*)» (Ա. Շառուկյան):

Հատկացուցչի և հատկացյալի համաձայնությունը առկայացման կարգով: Մենք մինչև այժմ խոսեցինք այն դեպքերի մասին, երբ հատկացուցիչը դրվում է եզակի թվի անձնական դերանուններով, և հատկացյալը համաձայնում է նրան դեմքով: Դա կատարվում է Ս, Գ, Ն/Ը հոդերի միջոցով: Բայց Ն/Ը հոդը, հատկացյալի վրա դրվելով, կարող է կատարել նաև այլ գործառույթ: Երբ հատկացուցիչը եզակի թվով անձնական դերանուն չէ, հատկացուցիչն ու հատկացյալը համաձայնում են առկայացման կարգով, այսինքն՝ Ն/Ը հոդն այս դեպքում ունի ոչ թե դիմորոշ, այլ ստացականություն և որոշյալություն արտահայտելու գործառույթ: Հատկացուցչի և հատկացյալի՝ առկայացման քերականական կարգով համաձայնությունը Արսեն Այտընյանն այսպես է ներկայացնում. «Եթե յատկացուցիչն որոշեալ է (յօղով կամ ուրիշ կերպով) յատկացելոյն վրայ ալ պէտք է ստացական յօդ դրուիլ. ինչպէս. Թագաւորին պատուէրը. Թռչնոյն բոյնը. Մեր ձեռքը. Եղբօրս որդին. Ծովուն եզերքէն եւ այլն: (Չ՛ըսուիր առանց յօղի՝ Թագաւորին պատուէր. թռչնոյն բոյն. եղբօրս որդի. քաղքին պահպաններ. - կամ անորոշ յօղով՝ թագաւորին հրաման մը. թռչնոյն բոյն մը. ծովուն խորշէ մը. գահերիցուն նամակով մը, եւ այլն. ապա թէ ոչ՝ յատկացուցիչ սեռականը տրականի նշանակութիւն կ՛առնու: Այսպէս ծանօթ առակը տրականով. **Խելին** խրատ, **սեւին** սապոն)»⁵: Այսպիսով, եթե հատկացուցիչը որոշյալ (թագավորին պատվերը) կամ ստացական (եղբորս որդին) հոդ ունի, հատկացյալը դրվում է որոշյալ առումով, ինչպես՝ «Կլսեր **Աղակնին ճիչը**, կլսեր իր **ամուսնին պոռպոցը**» (Շ. Շահնուր). «Քովի **տունին ժամացույցը** դարձյալ զարկավ» (Ա. Շառուկյան). «**Գեղին աղաները դպրոցին դուռը** նստեր էին» (Հ. Մնձուրի):

Իսկ «Եթե յատկացուցիչն անորոշ է, յատկացելոյն վրայ որոշիչ յօդ կրնայ դրուիլ ու չդրուիլ՝ ըստ իմաստին պահանջելուն. ինչպէս. Թագաւորի հրաման կամ Թագաւորի հրամանը. Թռչնոյ բոյն կամ բոյնը. Քաղքի պահապանները. Թշնամւոյ ձեռքէ կամ ձեռքէն: - Բայց առէկ դիտելու է որ Թռչնոյ բոյնը որոշիչ յօղով է, իսկ Թռչնոյն բոյնը՝ ստացական յօղով է»⁶: Այսինքն, եթե հատկացուցիչն անորոշ է, հատկացյալի հոդ ստանալը կամ չստանալը իմաստային գործառույթ է ստանում. այսպես, եթե **թռչունին բոյնը** նշանակում է բոյնը, որը պատկանում է թռչունին, ապա **թռչունի բոյնը** նշանակում է թռչնային բոյն, այսինքն՝ հատկացուցիչը վերածվում է որոշչի: Արևմտահայերենի հատկացուցչի՝ հոդով կամ առանց հոդի գործածվելուց առաջ եկող այս իմաստային փոփոխությունը, որը դառնում է նաև շարահյուսական փոփոխություն, կարելի է համեմատել արևելահայերենի հատկացյալի հոդով կամ առանց հոդի գործածվելու հետ, երբ **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությունը կարող է որոշիչ-որոշյալ կապակցության իմաստ ստանալ *իմմտ*. **թռչունի բոյնը - թռչունի բոյն, գրքի կազմը - գրքի կազմ** և այլն: Այս իմաստային փոփոխությունը, սակայն, սերտորեն կապված է նախադասության իմաստին, և եթե անորոշ հատկացյալներով ձևերը սովորաբար **որոշիչ-որոշյալ**

⁵ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 147-148:

⁶ Նույն տեղում, էջ 148:

հարաբերությունն են արտահայտում, ապա որոշյալ հատկացյալներով ձևերը կարող են արտահայտել ինչպես **որոշիչ-որոշյալ**, այնպես էլ **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությունների իմաստը, ինչպես՝ «**Մարի ծաղիկը** (որոշիչ-որոշյալ) գեղեցիկ է լինում» և «**Այս սարի ծաղիկը** (հատկացուցիչ-հատկացյալ) գեղեցիկ է լինում»:

Այսպիսով՝ արևմտահայերենում, եթե հատկացուցիչը որոշյալ է, հատկացյալը նույնպես դրվում է որոշյալ առումով, իսկ եթե հատկացուցիչն անորոշ է, հատկացյալը կարող է դրվել և՛ անորոշ, և՛ որոշյալ՝ ըստ խոսքի իմաստի: Ինչպես տեսնում ենք, հատկացյալի որոշյալ կամ անորոշ առումով դրվելը պայմանավորվում է ինչպես իմաստով, այնպես էլ հատկացուցչի առումով: Սակայն արևմտահայերենում հենց հատկացուցչի որոշյալ-անորոշությունը երբեմն կայուն դրսևորում չունի: Արևմտահայերենին նվիրված քերականական աշխատություններում նշվում են հատկացուցչի հոդառության որոշակի օրինաչափություններ: Այսպես, նշվում է, որ սովորաբար հատկացուցիչը դրվում է որոշիչ հոդով: Անորոշ են դրվում հիմնականում հեղինակների անուններով կամ աշխարհագրական տեղանուններով արտահայտված հատկացուցիչները, ինչպես՝ **Արովյանի երգիծանքը, Վենետիկի վանքը, Հայաստանի կառավարություն, Փարիզի քաղեր** և այլն: Սրա հետ պետք է հաշվի առնել, որ «Սովորաբար կ'ըսենք «**Չոհրապի** գիրքերը» (առանց յօղի) երբ մտքի մեջ ունինք Գրիգոր Չոհրապը. բայց կ'ըսենք՝ «**Չոհրապին** գիրքերը» (յօղով) երբ «Չոհրապ»ը հեղինակ մը չէ»⁷: Սակայն այս օրինաչափությունը հատուկ է միայն աշխարհագրական անուններին⁸, իսկ անձնանունների դեպքում երբեմն նույնիսկ միևնույն հատկացուցիչը միևնույն հեղինակի գրվածքում հանդիպում է ինչպես հոդով, այնպես էլ առանց հոդի, օրինակ. «**Նարեկացիի ոճին** մյուս հատկանիշն ալ, պարբերության կշռությունը, իրեն սեփական է» և «**Նարեկացիին ոճին** արտաքին շինվածքն անոր ներքին կազմության անցնելով, հոն կգտնենք ...» (Ա. Չոպանյան):

Նշվում է նաև, որ «երբ երեք կամ ավելի՝ նոյն ձևի հոլով ունեցող սեռական-տրական անուններ իրարու յաջորդեն՝ կրճանք անոնցմէ առաջինին յօղը ջնջել: Այսպես. Կրճանք ըսել՝ «Պետրոսի տետրակին կողքին վրայ գրեցի», փոխանակ ըսելու՝ «Պետրոսին տետրակին կողքին վրայ ...»⁹:

Հատկացուցիչը գրեթե միշտ հոդով է դրվում, եթե հոդի առկայություն- բացակայությունը հատկացուցիչ-որոշիչ իմաստատարբերակիչ գործառույթն ունի¹⁰, ինչպես՝ **գյուղին** (հատկ.՝ գյուղին պատկանող) **նկարիչը - գյուղի** (որ.՝ գյուղական) **նկարիչը, մարգարիպին փայլը - մարգարիպի փայլը, խահվեին գույնը - խահվեի գույնը, արևելքին երգերը - արևելքի երգերը, ծխախոտին փուփը - ծխախոտի փուփը** և այլն:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ եթե հատկացուցչի հետ հոդը կորցնում է նաև հատկացյալը, ապա ամբողջ **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությունը կարող է գործածվել որպես որոշյալին բառակապակցություն, ինչպես.

հատկացուցիչ - հատկացյալ	որոշիչ - որոշյալ	որոշիչ
խահվեին գույնը	խահվեի գույնը	խահվեի գույն հագուստ

⁷ Չ. Մելքոնեան, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրոս, 1981, էջ 168:
⁸ Տե՛ս Եր. Տասնապետեան, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 123:
⁹ Չ. Մելքոնեան, նշվ. աշխ., էջ 169:
¹⁰ Տե՛ս Ռ. Սարապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 132:

Հատկացուցիչ-հատկացյալ համաձայնության մասին խոսելիս պետք է նշել մի ուշագրավ հանգամանք ևս: Ինչպես ասվեց, հատկացյալի հող ստանալ կամ չստանալը սերտորեն առնչվում է հատկացուցչի հող ունենալուն կամ չունենալուն, ինչպես նաև հատկացուցչի այս կամ այն դեմքով արտահայտված լինելուն: Այսինքն՝ հատկացուցչի և հատկացյալի թե՛ դիմային, թե՛ առկայացման կարգերով համաձայնության դեպքում հատկացյալն է համաձայնում հատկացուցչին: Առկա է գերադաս բառի համաձայնությունն ստորադասին: Արևելահայերենում գերադաս բառի համաձայնությունն ստորադասին առկա է միայն մի դեպքում՝ որոշիչ-որոշյալ որոշ կապակցություններում: Այս հարցի մասին Վ. Առաքելյանը գրում է. «Հայերենում, ինչպես նկատվեց, հոլովի, սեռի համաձայնությունն որոշիչի և որոշյալի միջև գոյություն չունի: Իսկական քերականական տեսանկյունով չկա նաև թվական համաձայնություն, միայն մի շարք ածականներ, թվականներ, դերանուններ, դառնալով որոշիչ, հաճախ պահանջում են հոգնակի որոշյալ: Ուրեմն ոչ թե որոշյալն է իր թիվը պարտադրում որոշիչին, այլ, ընդհակառակը, որոշիչը, եզակի լինելով, բայց ունենալով հոգնակիի նշանակություն, իր իմաստը պարտադրում է որոշյալին, և վերջինս այդ հոգնակի իմաստը արտահայտում է հոգնակի ձևով»¹¹: Բայց այս հարցին թերևս պետք է մոտենալ երկու տեսանկյունով. տրամաբանորեն առաջնայինը առարկաներն են, նրանցից է բխում հատկանիշը, իսկ քերականորեն փաստորեն որոշիչն է իր իմաստով փոխում որոշյալի քերականական կարգը, ինչպես՝ **փարբեր գրքեր, մեծ-մեծ քայլեր, բազմաթիվ ծառեր** և այլն: Առաջին հայացքից հակասական է թվում, որ ստորադաս անդամն է գերադասին թելադրում քերականական կարգը, բայց դրա պատճառն այն է, որ լրացումը լրացնում է գերադասին, ուստի դրանք իմաստով փոխկապակցվում են, և, ինչպես տեսնում ենք, այդ փոխկապակցության հետևանքով ինչպես գերադասը, այնպես էլ ստորադասը կարող են որոշակի քերականական կարգեր թելադրել: Որոշիչ և որոշյալի այս համաձայնությունը Ռ. Իշխանյանը համարում է առդրության մի տեսակ՝ անվանելով **կախում**. «Առդրության մի տեսակը կոչվում է կախում. դա այն է, երբ չհոլովված լրացումը թելադրում կամ պարտադրում է իր լրացյալի (գերադասի) թիվը»¹²: Ռ. Իշխանյանը նշում է նաև եզակի թիվ պարտադրող որոշիչների **որևէ, որևիցե, յուրաքանչյուր, մեկ, մի**:

Արևմտահայերենում նույնպես առկա է որոշիչ և որոշյալի վերոհիշյալ համաձայնությունը. «Հեռավոր և **փարբեր քաղերու** մեջ էին եկեղեցին ու ժողովարանը» (Ա. Ծառուկյան). «**Անթիվ-անհամար** մերկ **մարմիններ**, իրարու կապված դեղին ստեպդիներու պես, շարք-շարք կմնային դժոխքին մեջ: **Բազմաթիվ սապանաներ** անոնց շուրջ կդառնային» (Ա. Ծառուկյան): Բայց, ինչպես նշվեց, արևմտահայերենում առկա է նաև մեկ այլ գերադասի համաձայնությունն ստորադասին՝ հատկացյալի համաձայնությունն հատկացուցչին: Ծիշտ է՝ Ռ. Իշխանյանը կապակցման այս եղանակը համարում է առդրություն, բայց գտնում է, որ «Այսպիսի առդրությունը մոտ է մասամբ համաձայնությանը, մասամբ էլ ուժեղ խնդրառությանը (թեև լրացումն է կառավարողը)»¹³: **Որոշիչ-որոշյալ** կապակցությունների դեպքում, որոնց մասին խոսում է Ռ. Իշխանյանը, այս բնորոշումը միանգամայն ճիշտ է, իսկ արևմտահայերենի **հատկացուցիչ-հատկացյալ** կապակցություններում, մեր կարծիքով, առկա է որոշակիորեն դրսևորված համաձայնություն, քանի որ հատկացյալը ընդունում է հատկացուցչի թելադրած դեմքի և առկայացման կարգերը, և երկուսն էլ դրվում են միևնույն քերականական կարգերով:

¹¹ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 240:

¹² Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Եր., 1986, էջ 33:

¹³ Նույն տեղում:

Այսպիսով՝ որպես ընդհանրացում կարելի է ասել, որ արևմտահայերենում, երբ հատկացուցիչն արտահայտվում է եզակի թվի անձնական դերանուններով, հատկացյալը դեմքով համաձայնում է նրան: Մյուս հատկացուցիչների (ոչ եզակի անձնական դերանուններով արտահայտված) դեպքում գործում է հետևյալ համաձայնությունը. երբ հատկացուցիչը որոշյալ առումով է, հատկացյալը նույնպես դրվում է որոշյալ առումով, իսկ եթե անորոշ է, հատկացյալը կարող է դրվել և՛ որոշյալ և՛ անորոշ՝ ըստ խոսքի իմաստի:

А. Л. САРГСЯН - *Формы согласования определяемого слова и определения со значением принадлежности в западноармянском языке.* - В статье представлены способы согласования определений со значением принадлежности определяемого слова в западноармянском языке, проведены параллели с подобными же явлениями в восточноармянском.